

ՄԵԼԻԿ

Տարեկան դիմել 10 բուլլի. կէս տարւոյն 6 բուլլ.
Աւանդին համարները 5 կողմէ կողմ.

Քիթիլուում գրքում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Յարգարութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունւում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւարանիւր տողաւորին 10 կողմէ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

Գործի քաղաքում յունիսի 29-ին, առաւօտեան ժամը 11-ին, ծանր հիւանդութիւնից վաղաժամ մեռաւ բժիշկ

ԳԻՈՐԳ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՏԱՏԵԱՆ

որի մասին ամենադառն վշտով հանգուցեալի հայրը, մայրը և եղբայրը յայտնում են ազգականներին, ընկերներին և ծանօթներին: Յուզարկաւորութիւնը հինգշաբթի, յունիսի 3-ին, առաւօտեան 10 ժամին Գործի քաղաքում՝ իր բնակարանից դէպի ս. Ստեփաննոս քարայէն եկեղեցին:

1—3

ԲՈՒՎԱՆԴԱՅԻՆԻԻՆ

Գաղաքական տեսութիւն.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՆ. Նոր դրութիւն. Ներքին լուրեր.—Արտաքին ՏԵՍՈՒԹԻՆ. Սերբական անցքերը. Արտաքին լուրեր.—ՀԱՅԿԱՅԻՆԻՆ. — ՅԱՅՏԱՆԻ ԲԱՐՈՒԹԻՆԻՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աղջիկ սեռի վաճառքը Եւրոպայում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Միանախան հանրապետութեան նախագահ Լուրէի ճանապարհորդութիւնը դէպի Անգլիա, Հոսովի պապի ծանր հիւանդութիւնը, Թիւրքիայի և Բուլղարիայի մէջ ծագած նոր թիւրքիայութիւնները մակեդոնական գործերի վերաբերութեամբ, գերմանական ռալիստապի նոր կազմութեան բնաւորութիւնը գրաւել էին քաղաքական աշխարհի ուշադրութիւնը վերջին օրերս և առիթ դարձան բազմատեսակ խորհրդածութիւնների:

Միանախան նախագահը գտաւ Անգլիայում շատ սիրալիք ընդունելութիւն անցկացնելու ազգաբնակչութեան կողմից: Միանախան անունը յարգանք է վայելում անգլիական ժողովրդի մէջ և հպարտ անգլիացիները պատկառանքով են վերաբերում ֆրանսիական ազգի հանձարին և քաղաքակրթական նրա բարձր ձգտումներին: Եթէ քաղաքական հանգամանքները ստիպում են այդ երկու ազգերին շատ անգամ միմեանցից բաժանու և երբեմն

միմեանց հակառակ գործել, այնու ամենայնիւ այդ ազգերը չեն դադարում միմեանց յարգել իրանց արտերի խորքերում և համարել նրանց շատ մօտ միմեանց: Հոսովի պապի ծանր հիւանդութիւնը և մօտալուտ մահի երկիւղը մեծ վրդովմունք են առաջ բերել կաթոլիկ հոգեւորականութեան բարձր շրջաններում: Ո՞վ կը լինի պապի յաջորդը—այդ հարցը շատ հետաքրքրում է կաթոլիկ աշխարհի ղեկավարող շրջանները: Լեոն XIII-ը իր քաղաքագիտական լայն հայեացքներով շատ մեծ ծառայութիւն մատուցեց կաթոլիկ եկեղեցու վարկը պահպանելուն և կարողացաւ ցրել բազմաթիւ թիւրքիայութիւններ, որոնք առաջ պատճառ էին լինում անանործութիւնների: Այժմ հետաքրքրական է դարձել այն հարցը, թէ ով այժմեան թեկնածուներից աւելի լաւ կարող էր լինել Լեոն XIII-ի գահի արժանաւոր շարունակողը և նրան զարգացնողը: Հրապարակի վրա գրած են երկու կարգիւնայինքի անուններ՝ Գոտտի և Բամպոյայի:

Թիւրքիայի և Բուլղարիայի մէջ յարաբերութիւնները թէ՛ն է ժամանակակից պայմաններում և սուր կերպարանք ստացան, բայց նա հաւանական է, որ ոչ մի լուծ հետեւանք չունենայ և Մակեդոնիայի խաղաղացման գործը առաջ գնայ գլխաւորութեամբ: Այժմ միայն մի հարց շատ զբաղեցնում է մակեդոնացիներին, դա նրանց անտեսական ապագայութեան հարցն է: Մակեդոնացիները ապստամբական յուզումներով պատճառով անկարող եղան կանոնաւոր կերպով

Բերլին, Վիեննա, Նիւ-Եօրկ, Զիւրիք—այնքան մեծ չափով տարածված պոնտիկանցները սոփոթութիւն ունեն վստահելի մարդկանցից, մեծ գնեցով, ուժեղ ու յաղթանակաւ պահապաններ ունենալու, օժտված ամենապայքների յատկութիւններով՝ գողութեամբ, զբաղանալու անհաւատ և մարդապաշտութեամբ: Մեծ ու հարուստ պոնտիկանցները ունեն մեծ ու գաղտնաբերութիւն բաժանմունքներ, ստորերկրեայ սենյակներ: Քանի քանի անգամ այդ դժոխային բաժանմունքներում դահիճ պահապանների ակնթարթային գործողութեամբ մորթվել են յաճախորդներ ամենահարուստ դասակարգից և յափշտակվել նրանց բոլոր ունեցվածքը: Լոնդոնը այդ կողմից ևս դափնի վատակելու յարդ ու արժանիք ունի, մանաւանդ քաղաքի «Fleet Ditch» կոչված մասը, ուր գրեթէ իւրաքանչիւր տուն մի պոնտիկանց ունի: Մի անգամ, կասկածի ժամանակ, Լոնդոնի ոստիկանութեան մանրամասն հետախուզութեամբ գտնվել են շատ պոնտիկանցներում անաղին քանակութեամբ կամուրջներ, զիգած ստորերկրեայ խցերում: Սա արդէն, ինչպէս ընթերցողը պարզ նկատում է, հասարակական չարիքի եթէ վայել է այսպէս ասել, ամենալուրջ պատկերն է, ուր սօցիալական օրդանիզմի կրած վնասը, լայնացումը, կորուստն ու խորտակումը բազմակողմանի ոլորտում են: Մինչև այստեղ համառօտ և էական գծերով նկարագրելով մեզ զբաղեցնող խաւար օրինակը՝ լայնիւր սեռի ֆիդիլական ու բարոյական վաճառքը, կարեւոր է համարում դրան յարակից մի փոքրիկ բացատրութիւն այն նախա-

զբաղվել իրանց երկրագործութեամբ և իրանց ուշադրութիւնը նուիրեցին հայրենիքի ազատութեան հոգեւորին: Մի կողմից ապստամբութիւնը հանդիպեց անապահով մեծ խոչընդոտների, միւս կողմից զիւղացու զաշտերը մեացին անմշակ և ահա մեր առաջ կանգնած է մի ժողովուրդ, որ ձեռնով համար պաշարներ չէ պատրաստել և մի քանի ամսից յետոյ մեծ կարօտութեան մէջ պէտք է լինի: Դա էլ պակաս հոգս չէ խեղճ մակեդոնական մասնայի համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Ն Ո Ր Դ Ր Ո Ւ Թ Ի Ն

Ժիլդ է, սրանից երկու տարի առաջ, ճշգրտամի ժամանակ անխնայ արձակում էին արհեստագործներ, բանւորներ, բայց վերջիններս որոշ չափով իրանց ապահոված էին զգուշ, որովհետև շատերը զբաղեցնում էին յետ գցած կօպէկներ, որով կարող էին մի կերպ շօշալ գնալ, մինչև նոր տեղ ունենալը:

Այժմ դրութիւնը բոլորովին ուրիշ է: Սիւստեմատիկ կերպով արձակած մարդկանց թիւը գործակալատար, արհեստագործ և բանւոր, այնքան մեծ օգուտ է կազմում, որ մարդ ուղղակի չէ կարող առանց ուշադրութեան առնելու աշխատող անել այդ երեքը: Մէկ-երկու տարով անգործ շրջաններ կան, որոնք վաղուց է, որ չունեն այլ ևս ընկերներ ինչպէս առաջ, չունեն հագուստ, նոյն իսկ շատերը հացի փոքր ծածկի կարելի է պատահել կալարաններում արհեստագործ մարդկանց, որոնք քաջաշիջով ընդհատում են իրանց դրութիւնը և ինչուրեւ մի քանի կօպէկ հացի համար: Յուսահատ, թուրացած բնաւ չըլտում են անվերջ այն ամեն տեղերը, ուր կարելի է թէկուզ մի փոքրիկ գործ ձարել օրվայ ապրուստը հոգալու: Նորերս մի հին արհեստագործ (դարբին), որ առաջնորդում ստանում էր օրական 3 ր. 20 կօպէկ, առաջարկում էր իր ծառայութիւնը 80 կօպէկով: Նա կարողացել էր գործ ձարել և մի քանի օրվայ ստացածով անցնել Անդրկասպեան երկիրը, բայց այնտեղ նոյնպէս անհաւատ և անգործ թափառելուց վերադարձել էր դարձաւ մազութի հայրենիքը՝ աւելի մեծ չափով կեանք

չի ստացալու: Երբ պայմաններն ենթարկվելու են, քանի-քանի այդպիսիներ...

Կովկասի ամենախաղաղ անկեղծներից անգամ կարելի է հանդիպել այստեղ մարդկանց, որոնք եկել են աշխատելու համա բնաւանդներ, որ ունեն մի քանի աշխատող ձեռքեր և միանգամից դուրս են հանել դէպի արդիւնաբերական այս խոշոր կենտրոնը, թողնելով տանը աշխատանքի համար ամենաանպէտքին: Ժողովրդի անտեսական դրութիւնը այլ և այլ պատճառներից վատթարանալով փոխվել է նրա նիստ ու կացի ձեւը: Հասարակ գիւղացին, չփվելով քաղաքի շրջանների հետ, այլ ևս չէ բաւականանում իր հին, շատ անձուռնի կեանքով. մաքրութիւնը և լինել էլ փարթում ապրելը, համեմատած հին հետ, այսօր անհրաժեշտ մի խնդիր է դարձել: Եւ զարմանալի չը պիտի երևայ, որ ամենահեռաւոր անկեղծներում անգամ թողնում են վար ու ցանք, այդինքն և ապահովում քաղաքին: Գիւղացին չէ կարողանում իր ստացածով բաւարարութեան թաղ իր կենտանի պահանջներին արժեւանական հարկերին և զանազան զեւոտեկարներին: Փոքրիկ պարտքերը բազմապատկելով՝ քաղաք են նրան դէպի պատշաճ տեսութեան վայելքը, ուր նա ապրում է աւելի հակառողմապահական պայմանների մէջ, ստանում է վատ սնունդ, բայց կարողանում է բաւարարութիւն տալ այն բոլորին, որ պահանջվում է նրանից:

Դեռ նորերս մշակութի մէջ երևաց, թէ ինչպէս և ինչպէս շատ տեղերում կարկուտ ոչնչացրեց տարվայ բերքը և այդինքն, ինչպէս դժբաղդ ժողովուրդը վարում է անվերջ, բայց դեռ չը հասած՝ հնձողը անողոր ընտելիւն է. մի տեղ վարում են, կալում և պատրաստի վայելելու երբ էլ ցանկանայ աչքին է ուրիշի ճամբարին, մի այլ տեղ բնակալի դեր կատարող ինքը ընտելիւն է: Եւ մեծ վաղը չը պիտի զարմանանք, որ ինչպէս հայ աղջիկը յօժարակամ դուրս գալ աշխատելու նոյն իսկ օրական հինգ կօպէկով, եւ այն ժամանակ զեւորիք տեսութեանը, որոնք արտադրութեան են մեր կարմիր դարձող ցանկերի, որ ամեն օր, ամեն րօպէ աւելի բարդանում է և խտանում է:

Ով հետևում է մեր գաւառական մանր լուրերին, թող թաղութիւններին, նա չէ կարող

մաները: Նրանք լաւ գիտեն, որն է բարոյականութիւնը, շատ թանկ են գնահատում իրանց անձնական առողջութիւնը, արհեստում են ֆիդիլական, մտաւոր կեանքի կորուստը: Նրա, ընդհանրապէս, կեանքի խնդիր անողոր կորուստը իր բոլոր ճիւղերում սպառնալից անհատի ամբողջական գոյութիւնը, այն ժամանակ, հասկանալի է, որ նա ֆիդիլական, բարոյական կեանքի գնով ապրուստ պէտք է որոնէ, ինչպէս և ուր ուղում է լինի, այդ մի է նոյնն է, նրա ինտելիկտները թեւադրում են իրան մահից փրկել: Անուշեւտե թող ոտակալութեան խմբերը խաղաղ չարքերը, հակեն հազարաւոր աչքերով, այդ մի է նոյնն է, չարքեր անվերջ և անվտանգ առաջ է գնալու աներեւակելի գաղտնաբերութեամբ: Եւ երբ ամենայն իրաւամբ նկատում է, թէ այդ և դրա նման խոշոր արմատական չարքերը անխուսափելի բերմունք են, իրանց ծաւալող ընտելութեամբ, արդէ քաղաքակրթութեան, հօ դրանով չէ հաստատվում: Թէ ինքը քաղաքակրթութիւնը մի է նոյնն ժամանակ չարք է ծնեցնում, կամ ինչպէս տեսնել են, նրա մի կողմը փթած է, այլ այն, որ ինքը կենտրոնական յեղաշրջում է ընդհանուր կեանքի սօցիալական պայմանները և այլ կերպ կոչում, կոփում մարդկային ընկերութեան կազմակերպութիւնը, ուր կերպարանքը տալիս նրա բաղադրութիւնը՝ տարրերի յարաբերութիւններին: Այդ միջոցով արագացած սօցիալական անապատ պայմաններն արդէն ընտելանալով ծնունդ են տալիս հասարակական աղետաբեր չարքերներին: Երբեք արմատական կան վերացումը դարձաւ պայմանաւոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂՋԻԿ ՍԵՌԻ ՎԱՃԱՌՔԸ ԵՒՐՈՊԱՅԻՄ (Ղ Ե Ր Չ)

Իսկ ինչ վերաբերում է «մարդ-ապրանքների առևտրական կազմակերպութիւններին, որոնց ընդհանուր կենտրոնը համարվում է Լոնդոնը, բաժանվում են, ըստ Դիւհլենի ասածի, մի քանի կաթոլիկների, իրանց տիպիկական առանձնայատկութիւններով: Ամենատարածված ու աղջիկներ համարվում է «Bawds» կամ «Procureurs» կոչված դասակարգը, բաղկացած գլխաւորապէս կանանցից, որոնք Մի ուրիշը, անհամեմատ երկուդարի տեսակից, համարվում է «Jilt», ուր շողորթութեամբ և քծնութեամբ կազմակերպում են յաճախորդների գրպանները: Ապա «Intelligencers» տեսակը, որ զարմանալի խարդախ ծարպիկութեամբ անգամ ամուսնական կապեր են հաստատում հարուստ երիտասարդի և առաջին կարգի պոռնիկի մէջ: Գրեթէ նոյն օրինակ դեր է խաղում «Pimps» կոչվածը, որ վրիժնեւոր մեծ մասամբ ֆրանսիացիներ, որ գործ ունի աւելի «feins» հասարակութեան հետ:

Մի օտակալի, արիւնքանքի պատմութիւն է, օտակալի, խօսել այն զարհուրելի եղեռնագործութեան մասին, որ հասարակական տների զոյգութիւնը իր հետ բերել ու զարգացրել է: Եւրոպայի և Ամերիկայի Միացեալ-Նահանգների մայրաքաղաքներում—Լոնդոն, Պարիզ,

առանց տխրելու, յուսահատվելու կարգով, թէ ինչպէս մտնել, կարկուտ անասուններէ հա- մաճարակ հիւանդութիւնները խեղդում, քա- ջարում և մոռում են գիւղացուն: Ինչ անէ խեղճ Խաչէնցին, հերքէ չէ, որ նա ամեն տարի ենթակայ է բնութեան արհաւիրքներին, այլ և ստիպւած է հոգալու թիւնը: Եւ Գորիսի մէջ պատրաստվող խնուզու ծախսերը, որ մի շա- շափելի գումար է այդ հասարակութեան հա- մար, մի գործ, որը որքան օրինաւոր, նոյնքան ապօրինի է:

Հայ հասարակութեան այն տարրերը, որոնք ապահով դրութեան մէջ են, երբեք չեն կարող մտածել և օգնել այնպիսի դիպուածներում, երբ անբերրեութիւնը, կարկուտը կամ համա- ճարակ հիւանդութիւնները ոչնչացնում են խեղճ գիւղացու անտեսականը, այդ տարրերին հարկաւոր է Շամախու և Ախալքալաքի երկ- րաշարժեր, որ ցնցէ նրանց մի րօպէ և զգաց- նէ իրանց պարտքը... Ի հարկէ միանգամայն միամիտ պէտք է լինել սպասելու հայ հարուս- տից կամ մեր բուրժուա-հետեղիներին: Ինչ անկամ և սրտաբուլիս որ և է օգնութիւն մեր հասարակական այն ցաւերի համար, որոնք օրվայ խնդրի են համարվում: Այդ օգնութիւնը դարձաւ պիտի սպասել այն մասից, որ իր կաշուի վրա փորձել և տարել է անվերջ դար- դոտ ցաւեր... Այս բոլորից յետոյ հետեղի մենք անվերջ ցանկանալով, որ գիւղացին ունենայ երկաթի կամը, չը բաժանիլ հողից, այն հո- գից, որը մենք նոյնքան փայլալուծում, գործու- րում ենք հետեղի պատճառով սիրով, որի հա- մար մենք շատ ենք ճանաչում և խօսում, բայց երբեք դարման չենք անում...

Այսպէս մենք տեսնում ենք, որ այստեղ աշ- խատանքի համար դիմողները ունեն իրանց հիմնական պատճառները, որ թողնում են ե- րեսի վրա ընտանիք, հող, այգիներ և գալիս են զէպի այս կամ ուրիշ կողմեր աշխատանք որո- նելու... Կան և այնպիսիները, որ միանգամայն գուրկ են հողից և այգիներից, բայց այնպիսի- ները կազմում են շատ քիչ տոկոս: Ի հարկէ այն և որտեղ նման կարացող շատ փառասեր զեռ- չեն ապացուցում, թէ Կովկասի հայութեան մէջ խոր արմատներ է ձգել այն, ինչ կոչվում է «հողագործի պոթիտարիստ» կամ իսկական «պոթիտարիստ», բայց որ նա կամաց-կամաց իր սաղմոս է ձգում, դա անվիճելի է: Անա- յայտ աս բոլորի գիմար մենք ակամատես ենք թէ ինչպէս հարկաւոր մարդիկ անգործ, զէս ու զէն ընկած, մուրալու օրին հասած, չը գիտեն ինչ անել: Դրանց մէջ շատերն են, որ եկել են այստեղ փող վաճառելու, ընտանիք պահելու և պարտքեր տալու: Կան մարդիկ, որոնք մերժում են նոյն իսկ անցնել գիւղը, որովհետեւ երկար ժամանակ է ոչնչով չեն օգ- նել ամսը և երեսի վրա են թողել իրանց եղած անտեսութիւնը:

Այսպիսի պայմաններում պիտի աշխատել գիւղերում հասկացնելու այս կողմերը եկող- ներին, որ գոնէ առայժմ անմտութիւն է հա-

ւատալ թէ շուտով կարելի է գործ ձարել Բագ- լում, Բալխանիում, ուրեմն մի կերպ քա- ջալ և զէս զնել այն պատուհաններին, որ խեղդում է գիւղացուն, աչքի առաջ ունենալով այն պայմանները, որ գիւղում գոնէ ապրելու հնարաւորութիւն կայ և վերջապէս հայ գիւ- ղացու ամենամեծ տեղիքը դեռ շատ ամուր է կապված իր տան և անտեսութեան հետ...

Հարկաւոր է այստեղ լուրջ ուշադրութիւն դարձնել, որ անգործ մարդիկ կարողանան տեղ ունենալ, որովհետեւ պ. պ. կառավարիչ- ների կապիւրը գերազանց տեղն է բռնում մարդ վարձելիս, պիտի կազմակերպել բանու- րական կասաններ պարագ մարդկանց ժամու- նակաւոր օգնութիւն հասցնելու: Արհեստանոց- ներում աշխատող արհեստաւորները պիտի միջոց տան պարագ ընկերներին էլ աշխատե- լու, կրճատելով իրանց աշխատանքի օրերի մի մասը յօգուտ նրանց: Եւ որ գլխաւորն է՝ մեր անգործ և խեղճ ինժեներները պիտի մի քիչ էլ յետ նայեն զէպի մայրաքաղաքների իրանց անցկացրած ուսանողական կենքի, իրանց քաղցր և անուշ երազների վրա, որով խորե- ցին իրանց և մեզ և գոնէ այժմ աշխատեն տե- ղաւորել պարագ մարդկանց, այլապէս նրանք նորանոր չարիքների պատճառ պիտի դառնան, թողնելով անգործ մարդկանց յուսահատ դրու- թեան մէջ...

Ն. Տէր-Ղազարեան

Բալխանի

Ներքին լուրեր

Երէկ ստացանք մի ասուր լուր: Երիտա- սարդ բռնիք Գ. Տատեան յանկարծամէջ եղաւ Գորիսում, ուր գտնվում էր վերջին ժամանակ- ները: Հանգուցեալը պատկանում էր մեր երի- տասարդների այն հազագիշտ օրինակներին, որոնք պահպանում են ուսանողական եռանդը, ոգևորութիւն և հաւատ զէպի գաղափարական խնդիրները և հասարակական շահերը: Նա ընդ- լուրեց էր, ստացել էր սկզբնական ուսումը Բուլժայիսում և ապա տեղափոխվել Մոսկովայի համալսարանը: Ուսումը վերջացնելուց յետոյ նա զբաղվեց իր մասնագիտութեամբ, բայց մի քանի ժամանակից յետոյ նրան հրաւիրեցին Երևան տեսչական պաշտօնով թեմական դպրո- տում: Տատեան գնաց այնտեղ և սկսեց եռան- ղով գործել, բայց ինտրիգները և չարամուտ- թիւնը յարուցին նրա զէս ամբան թշնամու- թիւններ, որ նա թողեց իր պաշտօնը և նորից գիմեց իր մասնագիտութեան: Այս ձմեռվայ սկզբին նա սկսեց զգալ տկարութիւնները ըս- տաճառի չլիանում: Թէեւ երկար ժամանակ հիւանդ պատկեց, այնու ամենայնիւ կազդու- վեց և նորից վերսկսեց իր պարագանքները: Մահը վրա հասաւ առողջ վիճակի մէջ, երբ նա կարգում էր լրագիր: Տատեանի մահը մանա- լանդ զգալի է գորեցիներին: Կամար, որոնք յոյս ունէին նրան ապագայում թէ քաղաքա- ղուլիս ունենալու և թէ առհասարակ իբրեւ ա-

ռաջադէմ մի ոյժ: Տատեան մեռաւ 80 տարե- կան հասակում:

«Кавказ» լրագրում տպագրված է. «Հրա- տարակված է օրէնք, որի գործութեամբ Թերե- կի չըմանի Կոնստանտնուպոլսկայա գիւղը դատ- վում է այն տեղերի կարգը, որոնց մէջ ար- գելում է ապրել ոստիկանական հսկողու- թեան տակ գտնվող անձներին: Հրատարակված է նաեւ, որ անտառների պաշտպանութեան օ- ղերը իր ամբողջութեամբ կը մտնի թիֆ- լիսի: Փանձակի, Բագուի և Երևանի նահանգ- ներում—Վճռված է նախալին հողերի տեղա- փոխութեան գինը Բագուից զէպի Բաթում և ապա Նախալքալաքի հաւասարեցնել կերտների տեղափոխութեան գներին:

«Kraj» լրագիրը մարմնական պատիժների ծանրագոյն տեսակները վերացնելու վերաբե- րեալ նոր օրէնքի առիթով լուր է հաղորդում, որ պետական խորհրդի մէջ գտնվում է «բոգ- գիով» ծեծելու պատիժները վերջնականապէս վերացնելու նախագիծը:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ուսուցիչ կանանց փոխադարձ-բարեգործա- կան ընկերութեան խորհուրդը միջնորդու- թիւն յարուցեց՝ կանանց ժառանգական իրա- լւանքների մասին գոյութիւն ունեցող օրէնք- ները փոփոխելու վերաբերմամբ: Միջնորդու- թիւնը պատճառաբանում է նրանով, որ կնոջ կենքի տնտեսական պայմանների մէջ տեղի են ունեցող փոփոխութիւններ և որ կինը յա- ճախ միակ կերակրողն է իր ընտանիքի: Միջ- նորդութեան նպատակն է հաւասարեցնել կնոջ ժառանգական իրաւունքները տղամարդու ի- րաւունքների հետ:

Դպրոցական հետաւոր ճանապարհորդութիւն- ներ սկսում են կատարել նաեւ աշակերտուհի- ները: Յունիսի 27-ին Թիֆլիս հասան 15 հոգի: Եկատերինօպոլսի օրիորդաց գիմնազիայի աշա- կերտուհիներից. նրանք ճանապարհը Վրաթի- կովկասից զէպի Թիֆլիս անցել են ամբողջու- վին ուղղով: Թիֆլիսում աշակերտուհիները կը մնան երեք օր, կը տեսնեն քաղաքի նշանաւոր տեղերը և ապա ճանապարհ կընկնեն զէպի Զակվա և Բաթում:

Անդրկովկասեան ուսուցչական ինստիտուտի վարչութիւնը շուտով ձեռնամուխ կը լինի սե- փական չէնքի կառուցման ինտիտուտի հա- մար: Նոր չէնքը կը գտնվի Վերկիօկիտեմե- կայան փողոցում, Զէպէի ժառանգներից գնված հողաբաժնի վրա: Ժողովրդական լու- սաւորութեան միմիջորդութեամբ ինստիտուտի շինութեան համար տալիս է 100,000 ռուբլի: Ենթի մակարդակն արդէն կազմված է:

Թիֆլիսի նահանգի ազնականութեան կա- լուածները կառավարող մասնաժողովը, խոր-

հրդակցութեամբ ազնականութեան պարա- ղլիս և պատգամաւորների ազնականութեան կողմից, յունիսի 26-ին որոշեց Արծրունու նախկին թատրոնը առաջիկայ սեզոնում յանձ- նել վրաց դրամատիկական ընկերութեան, առ- րեկան 2000 ռուբլի վարձով: Մինչեւ այժմ այդ թատրոնը արվում էր նոյն ընկերութեան, առ- րեկան 4,500 ռուբլի վճարով:

Կառավարութիւնը յարգել է այն միջնորդու- թիւնը, որով խնդրվում էր թոյլ տալ Գաղթիի ցուցահանդէսին ժամանակել ցանկացող էքս- պանսիոներին՝ ճիշդաւոր ճանապարհորդել Անդր- կովկասեան երկաթուղով: Գաղթիի բուսաբու- ծական ցուցահանդէսը տեղի է ունենալու ա- ռաջիկայ օգոստոս ամսին:

Ակցիզային վարչութեան մէջ եղած տեղե- կութիւններով, ներկայ տարվայ ընթացքում զինեանների թիւը Թիֆլիսում հասնում է 979-ի:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Վերջապէս Բե- նիկ վարդապետը գնաց: Մեր քաղաքի «Էշ- խանները» նրան հրաժեշտի ճաշ տուին: Սղան բազմաթիւ ճառեր ու կենացներ: Օրվայ հերո- քը տաքացաւ, խօսեց—բառեր, որքան ուղեւ- էլ ու էլմիճածին, էլ հայրը աղգ, էլ լուսաւոր- չի հաւատ ու հայ ժողովուրդ, էլ «Բիւս տխուր միտակութիւն» ու «Վարդապետական սե- սիրտ»... ամեն ինչ իրար խառնվեց, կազմե- լով կեղծիքի մի տարօրինակ համերգ: Իսկ ճաշ տուողներն ակամջները կախած, հեզ ու խոնարհ՝ միշտ պատրաստ էին «կեցցէ», բարձր բղաւել... Բայց դարձնեք մեզայի միւս երեսը: Ծաշ են տալիս լուս տեսչութիւն արած լինե- լուն համար այնպիսի մարդիկ, որոնք նրա 3 ամեայ տեսչութեան մասին ոչ մի գաղափար չունեն, որոնք ոչ մի անգամ դպրոցի չէմբը ոտ չեն դրել, բացի պոռոտախօս և անմիտ հանդէսների օրերից... Մինչդեռ 40—60 հոգի, զանազան կուսակցական ու անձնական հա- չիւններից զբոսած՝ ճաշ տուին այդ թերուս անձին, նրանց ճաշի ու բրավոների կողքից լսվում էր մի այլ ձայն, դա 500—600 աշա- կերտների դառն անէծքների ձայն էր: Նա գնաց, տանելով իր հետ մի երկու աղանդի բարե- կամութիւն, բայց ամբողջ աշակերտութեան և ուսուցչութեան մեծամասնութեան անէծքն ու ատելութիւնը Այժմ ձայն կայ, որ նրան կարող են նշանակել Ներսիսեան դպրոցի տեսուչ (գոնէ այդ վառ յոյսն է տաճում ինքը) կամ Փանձակի յաղորդ... այդ մի և նոյն է: Նա իր կուսարար ու ինտրիգան ընտառու- թեան չորհրդի միջոց ու միջոց «երեքեալ և տա- տանեալ» պիտի մնայ... մենակ, առանց ոքը- տակցի, առանց անկեղծ ընկերի»:

ու կարկատանից վաճառվածը շատ քիչ է, բաւականութիւն չէ առաւել: Երրորդը՝ «որով- հետեւ ես որպէս բանաւորուհի, գործարանից հետաքրքրվել եմ և այժմ աշխատանքից զուրկ եմ, միջոց չունեմ ապրելու»: Զորքորդը՝ «ու- ռովհետեւ հայրս միտել է և ինձ վրա ծանրացել է չորս փողերի լուրջ ու եղբայր պահելու հոգ- սը» և այլն և այլն: Պատասխաններ, որոնցից իւրաքանչիւրը բաւական պերճախօս ապացոյց է, որ գալիս է կրկին ու կրկին հաստատելու, թէ կենքի մի շերտերի մէջ են թաղված սո- ցիալական չարիքի խորարմատ պատճառները:

Յիշենք յօդուածիս վերջում, որ աղջիկ սեռի վաճառքի և ծառայող պոռնիկութեան դէմ կըռ- տող ֆեդերացիան (կենսաբանական կոմիտէն գտնվում է Պարիզում), որին մասնակցում են եւրոպական գրեթէ բոլոր առաջնակարգ եր- կիրները, առաւելապէս կանացի սեռից, մեծ եռանդով նիւթ է ժողովում, փաստեր կու- տակում, վիճակագրութեան և էքսպերի- միջոցով, որպէս գի իր առջև դրած բարդ խն- դիր հիմնովին ուսումնասիրելու և նրա դէմ արմատական միջոցներ ձեռնարկելու նորա- տարութիւն ունենալ: Ֆեդերացիայի ձեռնորդը գանազան երկիրներում, հաստատվում են սո- վորաբար այնպիսի նաւահանգստային քաղաք- ներում, որտեղ կենտրոնացած են «ծախու հա- նած» մարդ-աղանդները՝ վաճառանքները: Գիտաբար բերութեանը միջոցները պատ- կանող գերմանական տեղական մարմինը հաս- տատված է Համբուրգում:

Բ. Խշխանեան

Լայպցիգ

1) Dr. F. S. Hügel, „Geschichte, Statistik und Regelung der Prostitution in Wien“.

2) Dr. Fock, „Prostitution in ethischer und sanitärer Beziehung“.

1) Տե՛ս Ազգայն Բերքի նոյն աշխատութիւնը, էր. 176:

2) K. Schneidt, „Das Kellnerinnenelend in Ber- lin“.

Электротечатня Груз. Изд. Т-ва, Б. Сапская ул.